

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ռ Ռ Ա Մ 33/5

28 օգոստոսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 27.07.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Զ Եգոր Թադևոսյանի 18.07.2012թ. դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 02.07.2012թ. թիվ 2114349 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն Վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի 12.06.2012թ. թիվ 2114349 հանձնարարագրի, Ա/Զ Եգոր Թադևոսյանի մոտ կատարվել է ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահելած իրավասության սահմաններում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 27.05.2011թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Ստուգման արդյունքում 02.07.2012թ-ին կազմվել է թիվ 2114349 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջարկվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուց Տարոն Գևորգյանի կողմից 15.06.2012թ. ժամը 14:55-ին ք.Երևան, Հալաբյան 19 հասցեում գտնվող խանութից կատարվեց հսկիչ գնում 200 դրամի չափով՝ 2 հատ սառը սուրճ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Զ Եգոր Թադևոսյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այսուհետ ժամը 15:10-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Հ> հաշվետվություն՝ 5610 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Հ> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 200 դրամը, ժամը 15:11-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 15:12-ին նորից դուրս բերվեց <Հ> հաշվետվությունը՝ 200 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին <ՀՀ կիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջարկված է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Զ Եգոր Թադևոսյանի գանգատում մասնավորապես նշված է.

Ստուգման ակտով արձանագրված խախտումը չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, ստուգման ակտի համաձայն, հարկային տեսուցի կողմից ժամը 14:55-ին խանութից կատարվել է 200 դրամի հսկիչ գնում: Սակայն, իրականում կատարվել է 3 հսկիչ գնում ժամը 14:54-ին 200 դրամի, ժամը 14:55-ին 160 դրամի և ժամը 15:04-ին 500 դրամի (կտրոնները կցվում են): Ըստ գանգատի, Ա/Զ Եգոր Թադևոսյանը կտրոնները տրամադրել է հարկային տեսուցին:

Մաշտոցի ՀՏ կողմից կազմված ստուգման ակտը Ա/Զ Եգոր Թադևոսյանը ստացել է փոստային ծառայության միջոցով ս.թ. հունիսի 3-ին, որից հետո 04.07.2012թ. և 12.07.2012թ. դիմումներ է ներկայացրել Մաշտոցի ՀՏ, սակայն որևէ պատասխան չի ստացել:

Եթերով վերոգրյալից Ա/Զ Եգոր Թադևոսյանը խնդրում է ստուգման ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև ՀՀ կառավարության պահանջները) լսելով Ա/Զ Եգոր Թադևոսյանի լիազոր ներկայացուցչի և ստուգում իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացուցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում հարկային տեսուչ Տարոն Գևորգյանը պնդեց, որ իր կողմից 15.06.2012թ. ժամը 14:55-ին ք.Երևան, Հայաբյան 19 հասցեում գտնվող խանութից գնվել է 2 հատ սառը սուրճ, որի դիմաց կանխիկ վճարել է 200 դրամի չափով, սակայն գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Մասնավորապես, հարկային տեսուչը նախ գնել է 1 տոսկի ծխախոտ 500 դրամ արժողությամբ, որի համար վճարել է 20.000 դրամանոց թղթադրամ: Վաճառողը գումարը մուտքագրել է ՀԴՄ և տպել ՀԴՄ կտրոնը: Սակայն, վճարված գումարի մանրը չունենալու հետևանքով, վաճառողը դուրս է եկել խանութից 20.000 դրամանոց թղթադրամը մանրելու համար: Եթե վաճառողը վերադարձել է, ստուգող տեսուչը վերցրել է նաև ստուգման ակտում հիշատակված 2 հատ սառը սուրճը՝ գումարով 200 դրամ, և վաճառողին խնդրել է ստանալ նաև այդ գումարը: Վաճառողը ստացել է նաև նշված 200 դրամը, սակայն այն չի մուտքագրել ՀԴՄ և չի տրամադրել ՀԴՄ կտրոն:

Ստուգում անցկացնող հարկային ծառայողները ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այսուհետ ժամը 15:10-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Հ> հաշվետվությունը՝ 5610 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը (200 դրամ) ներառված չի եղել: <Հ> հաշվետվությունը դուրս բերելուց հետո՝ ժամը 15:11-ին, կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 15:12-ին նորից դուրս է բերվել <Հ> հաշվետվությունը՝ 200 դրամ ընդհանուր գումարով:

Ա/Զ Եզրոր Թագելույանի ներկայացուցիչը նշեց, որ ստուգող անձանց պնդումները չեն համապատասխանում իրականությանը: Ներկայացուցիչը նշեց նաև, որ գնումը կատարելու պահին խանութում էր գտնվում նաև արտասահմանից իրենց հյուրընկալված մի քաղաքացի, որն անհրաժեշտության դեպքում կարող է հաստատել իր խասքերի ճշմարտացիությունը:

Հանձնաժողովը, հաշվի առնելով կողմերի բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացուցները եկավ եղանակացության, որ քննարկվող դեպքում Ա/Զ Եզրոր Թագելույանի կողմից խախտվել են <<Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <ը> ենթակետի պահանջները, որի համաձայն հակիչ-դրամարկղային մեքենայի միջոցով հաշվարկներն իրականացնող պատասխանուու անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին տրամադրել դրամակղային չեկ (կտրոն): Արդյունքում կիրառվել է <<օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդի:

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եղանակացություն:


Ենթակ քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> <<օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովով

## որոշում է՝

Ստուգման ակտը թողմնել ասկուփոխ:

Որոշմանը համանձնվելու հետո ուսումնական տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատարածանը իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՄԵՂՅԱՆ